

Ողջույնի խոսք

Մեծարգո պարոն փոխվարչապետ,
Մեծարգո դեսպաններ,
Հարգելի հյուրեր և գործընկերներ,

Ողջունում եմ Ձեզ Սյունիքում և շնորհակալություն եմ հայտնում առաջին ներդրումային համաժողովին մասնակցելու համար: Կարծում եմ սա կլինի կարևոր նախադեպ և մենք կփորձենք առաջիկա 3 օրերի ընթացքում ներկայացնել Սյունիքի մարզի ներդրումային պոտենցիալը, ներդրումային գրավչության բարձրացման ուղղությունները՝ հաշվի առնելով մարզի համեմատական առավելությունները, որն էլ հիմք կհանդիսանա առաջիկայում նոր հարաբերությունների և նոր հնարավորությունների բացահայտման համար:

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԸ

Չնայած վերջին տարիներին արդյունաբերական արտադրանքի ցուցանիշների կայուն աճին, Սյունիքում սոցիալական վիճակի բարելավումը մեզ չի գոհացնում, քանի որ այս ճյուղի ձեռնարկությունները նոր աշխատատեղերի ստեղծման առումով ունեն սահմանափակ հնարավորություններ:

Պետք է նշեմ, որ ուսումնասիրելով մարզի տնտեսության կառուցվածքը, ակնհայտ է դառնում, որ գործ ունենք տնտեսության այսպես ասած կոշտ մոդելի հետ: Այսպես, արդյունաբերության ավելի քան 85.0% բաժին է ընկնում հանքարդյունաբերությանը, 10.0%՝ էներգետիկային: Դա է պատճառը, որ մեզ մտահոգում են արդյունաբերության մեկ ճյուղից կախվածության, բնակչության ցածր եկամուտների և աղքատության ցուցանիշները ու եթե սրան ավելացնենք վերջին տարիների ֆինանսատնտեսական ճգնաժամը և հետևանքները, ապա նոր հնարավորությունների բացահայտումը ժամանակի հրամայականն է:

Այս առումով այսօր արդեն մեզ համար հրատապ է տնտեսության դիվերսիֆիկացմամբ ապահովել նոր աշխատատեղեր և լրացուցիչ եկամուտներ և մենք արդեն ուսումնասիրում ու գնահատում ենք մարզի եկամտաբեր ներդրումային միջավայրը:

Պետք է նշեմ, որ 2014-2017թթ. մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրում, որը դեռ գտնվում է գործադիրում քննարկման փուլում, մենք արդեն ներգրավել ենք տնտեսության դիվերսիֆիկացման հատված, որը մշակել ենք ԵԱՀԿ-ը Սյունիքի մարզային կառույցի աջակցությամբ: Այն պիլոտային ծրագրերի առաջարկ է, որը ներառում է զարգացման ավելի մեծ ու տարողունակ ծրագրեր, որոնք կարող են ստեղծել նոր աշխատատեղեր:

Նման ծրագրերի իրականացման համար խիստ կարևոր է նաև ֆինանսական գործիքի ճիշտ ընտրությունը, մասնավորապես զարգացման հիմնադրամի ստեղծումը, որտեղ տեսնում ենք միջազգային ֆինանսական կառույցների ակտիվ մասնակցությունը, թե՛ ներդրման, թե՛ կառավարման գործընթացում:

Հարգելի հյուրեր, այս համաժողովը առաջինն է և ակնկալում ենք շահագրգիռ քննարկումներ: Մենք պատրաստ ենք լսել ձեր բոլոր առաջարկներն ու դիտողությունները ապագա ծրագրերում դրանք հաշվի առնելու համար:

Խնդրում եմ նաև կլոր սեղանների համակարգողներին քննարկման ընթացքում հնչած բոլոր առաջարկները մեզ փոխանցելու, որպեսզի այս 3 օրվա աշխատանքը հետագայում ունենա նաև իր արդյունքները:

Կրկին ողջունում եմ Ձեզ ու ցանկանում, բարի երթ մեր համաժողովին: